

ՓԱՍՏԵՐ ԵՎ ԹՎԵՐ ԵՄ - ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

#easternpartnership



Եվրոպական միության և Հայաստանի միջև հարաբերությունները հիմնված են ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) վրա, որը ժամանակակից, համընդգրկուն և հավակնոտ փաստաթուղթ է: Այն ստորագրվել է 2017թ. նոյեմբերի 24-ին՝ Բրյուսելում տեղի ունեցած Արևելյան գործընկերության զագաթաժողովի շրջանակներում ու 2018թ. հունիսի 1-ից մտել է ժամանակավոր կիրարկման փուլ: Այս համաձայնագիրը Հայաստանի ու ԵՄ-ի համար ի շահ ՅՅ քաղաքացիների համատեղ աշխատանքի հիմք է ապահովում՝ հանուն ժողովրդավարության ու մարդու իրավունքների ամրապնդման, նոր աշխատատեղերի ու գործարար հնարավորությունների ստեղծման, ավելի արդար կանոնների, ապահովության և անվտանգության բարելավման, ավելի մաքուր շրջակա միջավայրի, ինչպես նաև՝ ավելի լավ կրթության ու հետազոտական հնարավորությունների:

ԵՄ-ն Հայաստանի խոշորագույն ֆինանսական աջակիցն ու երկրում բարեփոխումների առանցքային գործընկերն է: Տարեկան 40 միլիոն եվրոյի դրամաշնորհային հատկացումներով, այն իր ներկայիս պորտֆելի Եական մասն ուղղում է Նոր կառավարության բարեփոխումների օրակարգին, մասնավոր հատվածի զարգացմանը, կրթությանն ու թիրախային տարածաշրջանների զարգացմանը: Ի լրումն, 2014թ.-ից ի վեր ավելի քան 1 միլիարդ եվրո է ներդրվել Էներգետիկայի, գյուղատնտեսության ու տրանսպորտի հատվածներում՝ խառը վարկերի և դրամաշնորհների տեսքով:

ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

✓ ԵՄ-ն աջակցում է Հայաստանում **ժողովրդավարական կառավարման բարեփոխումներին**՝ օրենքի գերակայությանը, հակախտրականության ուղղությամբ ջանքերին, մարդու իրավունքների առաջխաղացմանն ու պաշտպանությանը, ինչպես նաև՝ հիմնարար ազատություններին՝ ի թիվս այլի՝ մարդու իրավունքների ոլորտում առաջատար ոլորտային բարեփոխումների իրականացման ծրագրի միջոցով:

✓ ԵՄ-ն 9,5 մլն եվրո է տրամադրել՝ ի աջակցություն ՅՅ-ում ընտրությունների անցկացմանը: Որպես խոշորագույն առանձին աջակից՝ **ԵՄ-ն 2.4 մլն եվրո արժողությամբ փաթեթով սատարել է դեկտեմբերի 9-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններին**՝ ծածկելով տեխնիկական միջոցների ձեռքբերման, ինչպես նաև քաղաքացիական մասնակցության ու մշտադիտարկման միջոցառումների ծախսերը:

✓ ԵՄ-ն, 14,8 մլն եվրոյի օժանդակությամբ, աջակցում է **կոռուպցիայի դեմ պայքարում** ՅՅ կառավարության ջանքերին՝ սատարելով վերջինիս հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանն ու մաքսային և սահմանային կառավարման բարեփոխումների ընթացքին, ինչպես նաև՝ քաղաքացիական հասարակության նախաձեռնություններին, որոնք խթանում են հակակոռուպցիոն բարեփոխումներին և աջակցում են կառավարության հակակոռուպցիոն ջանքերին:

✓ Նոր գործարկված ԵՄ-Հայաստան ռազմավարական քաղաքականության երկխոսության միջոցով ԵՄ-ն աջակցում է **բարեփոխումների արդարադատության ոլորտում**, նպաստում է դատական մարմինների անկախությանը և ելթակառուցվածքների բարելավմանը: Հայաստանում կառուցվել կամ բարելավվել է դատարանի 12 շենք:

ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

✓ ԵՄ-ին բաժին է ընկնում Հայաստանի առևտրի ընդհանուր ծավալի **շուրջ 28%-ը**: Այն նաև Հայաստանի խոշորագույն արտահանման շուկան է, իսկ մետաղներն ու աղամանը դեպի ԵՄ շուկա արտահանվող «թով» ապրանքներն են:

✓ ԵՄ-ն հայաստանյան ընկերություններին տրամադրում է ֆինանսավորում, վերապատրաստում, ինչպես նաև՝ նոր շուկաներ մուտք գործելու աջակցություն՝ այդ թվում իր «EU4Business» («ԵՄ-ն բիզնեսի համար») նախաձեռնության միջոցով: Այդ ընկերություններին 2009թ.-ից ի վեր **տրամադրվել է 500 միլիոն եվրոյի վարկ**, ընդհանուր առմամբ, **աջակցություն է ստացել 25.000 ձեռնարկություն և ստեղծվել է 2.500 նոր աշխատատեղ**:

✓ ԵՄ-ն աջակցում է Դիլիջանտ զբոսաշրջության ոլորտին, մասնավորապես՝ նորաստեղծ **Չբոսաշրջային տեղեկատվական կենտրոնին**, «Դիլիջանտ» ազգային պարկում 11 հետիոտային արահետների բարելավման, **Արվեստների ու արհեստների կենտրոնի և մշտական հիմունքներով աշխատող քաղաքային շուկայի ու գյուղատնտեսական տաղավարների ստեղծման միջոցով**: Այս ամենի շնորհիվ տեղի ազգաբնակչության համար ստեղծվել է 50 նոր աշխատատեղ և աջակցություն է ստացել 100 ՓՄՁ:

ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ԿԱՊ

✓ ԵՄ-ն ֆինանսավորում է Հայաստանի և Վրաստանի միջև **Էներգափոխանակման և Էներգատարանցման** բարելավմանը, մասնավորապես՝ Հայաստանը տարածաշրջանային էլեկտրացանցին կապելու ճանապարհով:

✓ Շնորհիվ Եվրոպական միության Հարևանության ներդրումային գործիքի **Երևանի մետրոպոլիտենը** վերազինվել է ժամանակակից շարժակազմերով, երաշխավորվել է դրա ավելի ապահով շահագործումն ու կատարվել են շոշափելի Էներգետիկ խնայողություններ:

✓ Հայ-վրացական սահմանին **տեղակայված սահմանային** անցակետերը վերակառուցվել և համալրվել են ժամանակակից ենթակառուցվածքներով ու սարքավորումներով, պարզեցված ընթացակարգերով ու ժամանակակից սահմանային կառավարման համակարգով:

✓ Հայաստանը և Վրաստանը կապող երեք այլընտրանքային ճանապարհները խթանում են միջազգային առևտրին և տարանցմանը, հարակից համայնքների ու տարածաշրջանների 56,000 բնակիչ կարող է օգտվել **գերարագ ինտերնետից**, իսկ 1200 տնային տնտեսություններ կարող են միանալ նոր **գազաբաշխիչ ցանցին**: ԵՄ-ն նախատրագրել է **Հայաստանի հետ համապարփակ օդային փոխադրումների մասին համաձայնագիրը**: Ուժի մեջ մտնելով՝ այն ճանապարհի կհարթի ճանապարհորդների ավելի մեծածավալ փոխանակման, ավելի ցածր գների և նոր գործարար հնարավորությունների համար:

ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ՀԱՍԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ

✓ ԵՄ-ի ու Հայաստանի միջև Վիզաների ոլորտային և ռեալմիսիայի (հետընդունման) համաձայնագրերը ուժի մեջ են մտել 2014թ.-ին՝ **ավելի հեշտ, ավելի արագ և ավելի էժան դարձնելով վիզաների ստացումը հայերի համար**:

✓ «Էրազմուս+» ծրագրի (2014-2020թթ.) ներքո Եվրոպայում սովորել կամ դասավանդել է **հայաստանցի 1800 ուսանող և դասախոս**, 885 եվրոպացի էլ նույն նպատակով եկել է Հայաստան: Ի լրումն, շուրջ **6800 երիտասարդ և երիտասարդական ոլորտի աշխատող** մասնակցել է կարճաժամկետ փոխանակումների, շարժունակության, վերապատրաստման և կամավորական ծրագրերի:

✓ **258 հայկական դպրոց և 1235 ուսուցիչ** ներգրավվել է «Իթիլինգ Պլյուս» հարթակում՝ առցանց գործիքների կիրառմամբ գործակցության ընդլայնման նպատակով:

✓ Վերջին 14 տարվա ընթացքում Եվրոպական միությունը ակտիվորեն աջակցել է Հայաստանյան քոլեջներում կրթական բարեփոխումներին, դրանց վերանորոգմանն ու արդիականացմանը: ԵՄ-ի աջակցությամբ իրականացված **բարեփոխումներից օգտվել է ավելի քան 4500 ուսանող և վերանորոգվել է 17 քոլեջ**: 15 քոլեջում էլ ներդրվել է «Օրգանական գյուղատնտեսության» ուսումնական մոդուլը:

ԹՎԵՐ

ԵՄ-ի
օժանդակության
շնորհիվ Երևանի

1.1

միլիոն բնակչի համար
բարելավվել է խմելու ջրի
որակը:

Հայաստանի բոլոր
մարզերում վերանորոգվել է
մասնագիտական ուսուցման

17

հաստատություն:

7000

տնային տնտեսություն
աջակցություն է
ստանում էներգետիկ
արդյունավետության
համակարգերի
թարմացման
նպատակով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

ԵՄ-ի առաջատար հետազոտական և նորարարական ծրագիրը՝ «Հորիզոն 2020»-ը, Հայաստանում սկսել է գործել 2016թ.-ից: Հայաստանյան գիտա-հետազոտական ինստիտուտները, համալսարանները և անհատ հետազոտողները, ինչպես նաև՝ գործարարներն այժմ ԵՄ անդամ պետությունների հետազոտողների հետ հավասար հասանելիություն ունեն ծրագրի առաջարկած հնարավորությունների նկատմամբ՝ սկսած հիմնարար գիտությունից, վերջացրած՝ ցուցադրական նախագծերով: 18 նորարարական և հետազոտական նախագծեր, որոնցում ներգրավված են մասնակիցներ Հայաստանից, արդեն իսկ դրամաշնորհ են ստացել «Հորիզոն 2020» ծրագրի կողմից: Առաջին ծրագիրն իրականացվում է Հայաստանում:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԶԵՄՊԻՈՆՆԵՐ

ԵՄ-ն Հայաստանում էլեկտրոնային կառավարման հիմնական ջատագովն է: Այս դրությամբ, ԵՄ-ի աջակցությունը ներառում է ՀՀ կառավարական հաստատություններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրումը, հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային ռեգիստրը, մեկ կանգառով ավտոմեքենայի գրանցման համակարգը, վարորդական վկայականի տրամադրման ավտոմատացված համակարգը, առցանց «էլեկտրոնային ոստիկանությունը», էլեկտրոնային վիզայի համակարգը և բիզնեսի գրանցման առցանց համակարգը:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի չլուծված հակամարտությունը շարունակում է մարտահրավեր լինել տարածաշրջանում կայունության և բարգավաճման համար: ԵՄ-ն, այդ թվում Հարավային Կովկասի և Վրաստանի ճգնաժամի հարցերով իր հատուկ ներկայացուցչի միջոցով աջակցում և փոխլրացնում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ ի նպաստ հակամարտության խաղաղ կարգավորման: Եվրամիությունը խթանում է նաև հակամարտող հասարակությունների միջև վստահության և խաղաղության ամրապնդման միջոցառումներին, մասնավորապես՝ «Եվրոպական գործընկերություն» հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» ծրագրի իրականացման միջոցով:



EaP | Eastern Partnership

